

Ամբաս Բիւրաս  
Խմբագրութիւն «Փիւնիկ»ի  
Ալեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵՐԻՊՏՐՍ

ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻԵԸ  
ԿԱՆԽԻԿ Է



ՍՐՏԱՍԱՀՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ՐԱՎ. 6



# Փ Ի Ւ Ն Ի Կ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՉԵՌԻՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԷՔԵԱԲԹԻ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 18

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



«Փիւնիկ»ի Պատ. ընթերցողներուն  
խաղածանօթ Տիար Միհրան Տամասեան  
ներկայ Յայտարարութիւնը դրկած է  
Խմբագրութեանս 'ի հրատարակութիւնս:  
Մենք զայն կը հրատարակենք նոյնու-  
թեամբ, եւ հարկ չ'ենք տեսներ մեր  
կողմէն բառ մ'անգամ աւելցնելու:  
Չ'պիտի գրենք Պատշոյ Ատեանիկն վրայ,  
— եգիպտական նորութիւն մը — ո-  
րուն կազմութիւնն առաջարկած է Տ.  
Լ. Մկրտիչեան, ինքզինք նախատած  
հոչակելով «Փիւնիկ»ի «Անբաշ Դիակի  
մը վրայ» Մտասխարես» Խմբագրակա-  
նէն, որուն պարունակութիւնն ամբող-  
ջովին ի'նք հազնիլ ուզած է չ'եմ գի-  
տեր ի'նչ բազուն նպատակով:

Գալով անոր, Տ. Լ. Մկրտիչեանի  
որակիչ ածականին, զոր կարծած է  
իրաւունք ունենալ գործածելու «Փիւ-  
նիկ»ի Խմբագրին դէմ, ասի, բոլորովին  
անհասական խնդիր մ'է, որով «Փիւ-  
նիկ»ը չը գիջանիր զբաղիլ ո'չ ալ զբա-  
ղեցնել ժողովուրդը, որուն վստահուած  
ճանիւրն ու բռնաբարուած իրաւունքները  
պատշապանելու եւ մտաւորական ու բա-  
րոյական մակարդակը բարձրացնելու  
նպատակով հիմնուած է եւ ցարդ կը  
հրատարակուի այն:

Սակայն ասով չ'զբաղիլ՝ չ'նշա-  
նակեր անտարբեր ու լուռ մնալ, նա-  
խասինքի մը հանդէպ, հոգ չէ թէ՛ այդ  
նախասինքը բխի հասարակ բերնէ  
մը, որ արդէն վաղուց վարժուած է  
լոկ աղտոտ բառեր արժանանելու: Կա-  
ռավարութիւնը կանխագծած է այդ-  
պիսեաց համար օրէնքներ, որոնց ուժով

միայն կարելի է գապել ելլի հարկին՝ պատժել ու եւ է անհաս, որ ուրիշ անհասի մը կամ ամբողջ հասարակութեան մը հասցէին հայնոյանմներ կամ լուսանմներ կը տեղայ:

Այս մասին առ այժմ այսչափ գրելով, Պատ. ընթերցողներուն կուտանք սոյն յայտարարութիւնը:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տ. Լեոն Մկրտիչեան՝ «Փիւնիկ» շաբաթաթերթի «Անթաղ Գիւակի մը վրայ» խմբագրականը իր վրայ առնելով՝ այդ գրութիւնը իր յեղափոխական կեանքին դէմ չարաչար նախատինք մը նկատած և ըստ այնմ առաջարկած է Պատ. ընթերցողներուն մը կազմութիւնը, ուրիշներու հետ զիս ալ իր կողմէ դասաւոր նշանակելով:

Արդ, նկատելով որ, ինչպէս ամէն ոք գիտէ, չորս տարիէ ի վեր Տ. Լեոն Մկրտիչեանի և իր մէկ քանի ընկերներուն բռնած ուղղութիւնը և գործառնութիւնները Հնչակեան կուսակցութեան և ընդհանրապէս Հայ Յեղափոխութեան համար կորստաբեր դատած և բողոքելով հեռացած եմ իրենց գործակցութենէն:

Նկատելով որ տեղական ինչ ինչ խնդիրներու, օրինակ, Աղքատախնամի, Ընթերցարաններու միութեան և Աղբ. Վարժարանի շուրջը դարձած խնդիրներուն մէջ՝ իր կատարած գերբերը պարսաւելի գտնողներէն մին եմ:

Նկատելով միանգամայն որ, Աղբ. սանդղիոյ մէջ այս պահուստ յուզուող Սահմանագրութեան գործադրութեան հարցին հանդէպ Տ. Լեոն Մկրտիչեանի բռնած ընթացքը խստիւ դատապարտող մ'եմ իբր հանրային բարոյականի և ուղղամիտ նկարագրի դէմ մեղանշում մը:

Այսպիսի հանգամանքներու մէջ բոլորովին անպատեհ կը համարիմ ընդունիլ ինծի առաջարկուած դասաւորի պաշտօնը:

Եթէ սակայն իրօք այդպիսի Ատեան մը կազմուի, պատրաստ եմ ի հարկին՝ ո՛չ իբր այս կամ այն կողմէն կարգուած դասաւոր, այլ իբր պարզ վկայ մը՝ Տիար Լեոն Մկրտիչեանիզ եղափոխական անցեալին ու ներկային վրայ իմ կարծիքս յայտնել ամենայն անաչառութեամբ:

Զայս հրապարակու կը ծանուցանեմ ի դիտութիւն որոց որ անկ է:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

Ադեմ. 17 Սեպտ. 1901

### ԱՆՊԱՏԿԱՌ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ

Տիար Մկրտիչեան հիմա նոր դիւտ մ'ալ ըրած է: «Արշալոյս»ի մէջ խկսած է հրատարակել շարք մ'ալ կեղծանուն, անստորագիր և կամ «Մեր մասնաւոր քրթակցէն» վերնագրին տակ յօդուածներ որոնց պարունակութեան մասին եթէ ուէ խնդիր հանուի, անշուշտ պիտի վաւթայ յայտարարել թէ՛ ինչպէս որ «Քարտուղար» պաշտօնական ստորագրութիւնը չկրող յօդուածներուն համար մի միայն ինք անհատապէս պատասխանատու է, «Լեոն Մկրտիչեան» ստորագրութիւնը չկրող յօդուածներուն համար բնաւ ուէ պատասխանատուութեան տակ չիշնար ոչ Առաջնորդը ոչ Թաղական Խորհուրդը, ո՛չ Քարտուղարը և ոչ ալ անհատ Լեոն Մկրտիչեանը, նոյն իսկ եթէ ամէն ոք գիտնայ ու վկայէ թէ ինքն է այդ նոր գրութիւններու հեղինակը, նոյն իսկ եթէ այդ գրութիւնները իր յարուցած վէճերուն շարունակութիւնը

ըլլալէն զատ պաշտօնական հով մը ունենան իրենց վրայ: Այս տեսակ գրութիւններու կարգէն է «Արշալոյս» ի Սեպտ. 7ի համարին մէջ «1899ի ընտրութիւնները» վերնագրով յօդուածը որու մէջ ո՛չ թէ արդի, այլ նախորդ, այլևս Աղեքսանդրիոյ ազգային տարագրութեանց փոշոտած էջերուն մէջ միայն գոյութիւն ունեցող թաղ. Խորհրդին ընտրութեան օրինաւորութիւնը հաստատելու բողոքովին աւելորդ ճիւղեր կրնէ, Տիար Մ. Գալֆաեանի կողմնակի կերպով մէջ բերած մէկ նախագատութեան առթիւ: Ներկայ վէճի նիւթէն դուրս այդ յօդուածը բնականաբար չարժեք նկատողութեան առնել. զի, հա՛րկ է ըսել, վէճը արդի թաղ. Խորհրդին սահմանադրական կազմութիւն ունենալուն կամ չունենալուն վրայ է, ու նախորդին օրինաւորութիւնը «կուտ մը չարժեք», քանի որ հիմակուանը նախորդին չարունակութիւնը չէ՛: Եթէ Տ. Մկրտիչեանի այս նոր յօդուածին խօսքը կրնեմ, ուրիշ բանի համար չէ, այլ միայն ի վեր հանելու համար թէ՛ նոյն իսկ անստորագիր յօդուածի մը մէջ ի՛նչպիսի պաշտօնական շեշտ կը դործածէ ինքը, մինչդեռ ուրիշներուն չի թոյլատրեր որ իր պաշտօնական հանգամանքը շփոթեն իր անհատականութեան հետ. մէջ բերենք այդ յօդուածէն կտոր մը ոչ թէ վիճաբանելու, այլ պաշտօնին հեղինակութեամբը խօսիլը ապացուցանելու համար. «Շիտակն այն է որ 1899ի ընտրութեանց միջոցին ոչ մէկ զեղծում կատարուած է: . . . Բացորոշապէս հրաւեր կը կարդանք թէ՛ Տիար Մ. Գալֆաեանի և թէ՛ ժողովուրդի ուէ մէկ անհատին որպէս զի ուզուած ժամանակ թաղ. Խորհրդին դիմեն և խնդրեն յիշեալ մարմնէն որպէս զի 1899ի ընտրութեանց քուէտուփը իր ամբողջ պարունակութեամբ, անձամբ քուէ բերողներուն ստորագրութեան տետրը,

նամակով խրկողներուն նամակի պահարանները, ընտրողաց ցուցակը, արձանագրութիւնները, վերջապէս նոյն ամեն թուղթերը որոնք այդ ընտրութեան կը վերաբերին՝ իրենցոյց փրօւնելով: Եթէ երբէք կարելի ըլլայ մէկ անգամ նախօրէր զեղծում գտնել անոնց մէջ, ան ատեն աւստրերը գրողը ինքը պատրաստ է 1899ի ընտրութիւնները կատարեալ համազումով անվաւեր հռչակել: Տ. Գալֆաեան ի՞նչ ըսելիք ունի այս ՀՐԱԻԻԻՆ»:

Կը հարցնեմ. ո՞վ կրնայ ըլլալ այդ քացորոշ հրաւերը կարգացողը (թէ և մենք արդէն դիտենք թէ Տ. Լեոն Մկրտիչեանն է). ո՞վ կրնայ ըլլալ եթէ ո՛չ կա՛մ թաղ. Խորհրդոյ անգամ մը կա՛մ անոր արտօնեալ քարտուղարը: Դրսէն մէկը ի՞նչպէս պիտի կարենար ապահովցնել մեզ թէ ժողովրդէն ուէ մէկ անհատին ցոյց պիտի տրուի 99ի ընտրութեանց քուէտուփը իր ամբողջ պարունակութեամբ. դարձեալ, ենթադրելով որ ցոյց տրուեցան այդ թղթերը և, հակառակ ամեն ակնկալութեան, մէկ անգամ նախօրէր զեղծում գտնուեցաւ անոնց մէջ, ան ատեն «աւստրերը գրողը» եթէ ներսէն մէկը չէ, ի՞նչպէս պիտի տեղեկանայ մէջտեղ ելած զեղծումին: Եթէ «թղթակից» անուան տակ ծածկուողը քարտուղար Լեոն Մկրտիչեանը չէ, որմէ զատ ո՛չ ոք տակաւին յանդգնեցաւ հրապարակաւ իր ստորագրութեան տակ յայտարարել թէ արդի թաղական Խորհուրդը 1899ին ընտրուած թաղ. Խորհուրդն է, ի՞նչ հեղինակութեամբ այդ ենթադրուած պարագային պիտի ելլայ 1899ի ընտրութիւնները ԱՆՎԱԻԻԻ ՀՈՉԱԿԵԼ (այս պաշտօնական բառերը Առաջնորդի մը անգամ նախանձը կրնային չարժեք նոյնը ընելու արդի թաղ. Խորհրդին վերաբերմամբ):

Ըսէ՛ք, անաչա՛ռ ընթերցողներ, այդ սողերը գրողը իր պաշտօնին հե-

դիւնակութեամբը չի՞ խօսիր, թէև, ինչպէս ըսինք, իր ստորագրութիւնը անգամ չէ դրած այդ գրութեան տակ։ Կրնա՞յ ուրեմն ըսուիլ թէ այդ գրութիւնները պաշտօնապէս ներշնչեալ չեն, թէ Պատ. Խորհրդին եթէ ո՛չ թելագրութեամբը, դէթ թոյլտուութեամբը և հաւանութեամբը հրապարակ նետուած չեն այդ բոլոր գրութիւնները։

Հակառակ պարագային, ինչպէս կարելի էր ենթադրել թէ իր պաշտօնին կարգապահութեան դէմ այսպիսի յայտնի մեղանշումներ պիտի ներուէին Պրն. Քարտուղարին, որը դեռ առանց ամենալու կը գոչ սակայն արուեստակեալ սրտմտութեամբ մը. «Աս ինչ անիրաշական բռնապետութիւն է սեւ պաշտօնեայի ուրանալ իր անհատականութիւնը և անձնական համոզումները, պայմանաւ որ այդ պաշտօնեայն իր պաշտօնին կարգապահութեան դէմ չի մեղանշ»։ Եւ կը բացատրէ թէ ինք ինչ կերպ կը հասկընայ իր պաշտօնին կարգապահութիւնը. «Մենք ԱՅՆ ԱՏԵՆ ՄԻԱՅՆ կարգապահութեան դէմ մեղանշած կըլլայինք երբ ազգին պաշտօնեան ըլլալով հանդերձ՝ ազգային իշխանութեան դէմ զինուէինք»։

Տ. Մկրտիչեանին, կերևի, գործնական գասով մը սորվեցնել պէտք է թէ իր պաշտօնին կարգապահութեան դէմ մեղանշել մի միայն ազգային իշխանութեան դէմ զինուելուն մէջ չի՛ կայանար. այլ, ըլլա՛յ ազգային իշխանութեան լռելեայն կամ բացորոշ համերաշխութեամբը, ըլլա՛յ առանց այդ իշխանութեան մասնակցութեան կամ արտօնութեանը, օրինասէր հասարակութեան դէմ զինուի՛ ըն ալ իր պաշտօնին կարգապահութեան դէմ մեղանշում մ'է։ Եթէ ճիշդ են զանազան աղբիւրներէ մեզի հասած տեղեկութիւնները, Սրբազան Առաջնորդին ուղղուած հանրագրի մը տակի ստորագրութիւնները, որոնք Նորին Սրբազնու-

թեան խորհրդապահութեան վստահացուած են, ընդօրինակել և ստորագրութեանց տէրերը զանազան միջոցներով յետս կոչումի ստիպելն ալ իր քարտուղարական պաշտօնին կարգապահութեան դէմ է։ Նոյնպէս, եթէ ճիշդ է իր այն պնդումը թէ՛ առանց ազգային իշխանութեան թելագրութեանը՝ լոկ իր անհատական պատասխանատուութեան տակ դրած է ու կը գրէ իր նախատալից յօդուածները, այդ պարագային, դարձեալ իր պաշտօնին կարգապահութեան դէմ մեղանշում մ'է՛ իր անձնական դատին ծառայեցնելու համար՝ իր ուղած մէկ ՏՅԻՒՆԱՆՔ Պատ. Խորհրդոյ տուած արձեան օրինակելով հրատաշակութեան տալը, ինչպէս որ «Արշալոյսին» մէջ հրատարակած է Թաղ. Խորհրդէն Տ. Շնորհքեանի ուղղեալ 1900 Յունուար 21 թուակիր ծանօթ պաշտօնագիրը։ Իսկ եթէ Պատ. Թաղ. Խորհրդին հրամանովը և զիտութեամբն է որ այդ պաշտօնագիրը տուած է հրատարակութեան՝ այդ պարագային անհրաժեշտաբար պէտք է սուս նկատենք իր այն յայտարարութիւնը թէ իր սոսկական ստորագրութեամբ երեցող յօդուածները պաշտօնապէս ներշնչեալ չեն, այլ միայն իր կարծիքները կը ներկայացնեն իր անհատական պատասխանատուութեան տակ։ Ուրեմն այս կէտի մէջ անխուսափելի կերպով կա՛մ օրինաշանց է կա՛մ սսախօս։ Իրեն թողով որոշել թէ այս երկու մակդիրներէն ո՞ր մէկը (կամ արդեօք երկուքն ալ) կը յարմարին իր գործած զեղծումին, շարունակենք մեր խօսքը։

Դարձեալ իր պաշտօնին կարգապահութիւնը բնաւ երբեք պարտք մը չէր դնել իրեն վրայ՝ ժողովրդի մէկ մասին օրինական մէկ պահանջին դէմ օրուան ազգային իշխանութեան իբր արտոյեանը հրապարակ իջնել, անոր կազմութեան ճշմարիտ բնութիւնը խե-

դաթիւրել, այդ իշխանութեան առ-  
ժախեայ հանգամանքը, անոր հակա-  
ւանկանարական բացառիկ կազմը  
ուրանալ. կամ ուրիշ խօսքով՝ կար-  
գապահութիւնը զինք չէ՞ պարտաւորե-  
լը այսօրուան մեծաւայելքու գիրքը  
պաշտպանելու համար ստել և ճշմար-  
տութիւնը յայտարարողներուն դէմ  
լուտանքներ տեղալ: Եթէ ազգային  
իշխանութիւնը իր վրայ ճնշում իսկ  
բանեցնէր: զինք բունդատէր գիտակ-  
ցարար սուա խօսելու և ժողովուրդը  
խաբելու, իր պաշտօնին կարգապա-  
հութիւնը բնաւ երբեք չէր պարտա-  
ւորեր զինք, նոյն իսկ այդ պարագային  
մէջ, այդպիսի անպատուաբեր գեր մը  
ստանձնելու. այլ պատուաճանաչ ու  
խղճի տէր պաշտօնեայ մը կարող էր եւ  
պարտաւոր էր հրաժարիլ քան այդպիսի  
անհեթեթ ճնշումի մը համակերպիլ:  
Իսկ հիմա ի՞նչ անուն տանք իր բուն սծ  
ընթացքին, երբ ինք կը յայտարարէ  
մեզի թէ՛ այդ ամէնը ըրած է և կընէ  
անհատական պատասխանատուութեան  
տակ, հետեւաբար առանց ազգային իշ-  
խանութեան ճնշումին և ո՛չ իսկ հրա-  
մանին:

Այս կէտն ալ եզրակացնեմ. եթէ  
ճնշումի կամ հրամանի տակ կը գործէ,  
ուրեմն մեքենայ մըն է. բայց որով-  
հետեւ ամէն գնով ազգ. իշխանութիւնը  
պաշտպանել իր քարտուղարական պաշ-  
տօնին պարտականութիւններէն բոլր-  
բովին դուրս է, այս պարագային չի  
կրնար արդարանալ իր հետեւեալ յայ-  
տարարութեամբը. «Հրամանի տակ աշ-  
խատող պաշտօնեայ մը իր խմբագրու-  
թեանց պատասխանատու չի կրնար  
նկատուիլ. պաշտօնեան մեքենայ մըն  
է այն տեղ իր պետին հրահանգները  
գրի առնող և ո՛չ ուրիշ բան»: Իսկ  
եթէ ընդունինք թէ մեքենայ մը չէր,  
նովին գործով պէտք է ընդունինք որ  
ուրեմն ինքնայօժար մեքենայոյ մ'էր,  
թելագրուած այնպիսի գիտումներէ

որոնք մեզի անձանօթ և անհակահալի  
են. Մեքենայ թէ մեքենայոյ՝ հաւա-  
սաշապէս դատապարտելի է:

Հարկ չկայ սեղն երկարելու ա-  
պացուցանելու համար թէ՛ Տիար Մկր-  
տիչեան չարաչար մեղանշած է իր պաշ-  
տօնին կարգապահութեան դէմ, և թէ,  
չնորհիւ իր այդ ընթացքին, յաչս ժա-  
ղովրդին ա՛յն աստիճան կասկածելի  
դարձած է ինքը որ ո՛չ ո՞ք կը հաւա-  
սայ իր անկողմնակալութեան իր պաշ-  
տնօի կիրառութեան մէջ: Նոյնպէս ա-  
մէն անաչառ մարդ կը վկայէ թէ իր  
երեսէն ո՛ր աստիճան վարկաբեկ եղած  
է այսօր ազգային իշխանութիւնը առ-  
ժախապէս ներկայացնող մարմինը, որը  
սակայն ինք կը յարդէ եղեր... եւ  
որուն պաշտպանի ու փաստաբանի պաշ-  
տօնը ստանձնած է ու կը կատարէ  
այնչափ..... անձարակօրէն:

Ամփոփենք. ներկայ դրութեամբ  
հաստատեցինք թէ.

1. Տ. Մկրտիչեան իրօք ժողովուրդը նախատած է.
2. Յայտնապէս ու ծանրապէս մեղանշած է իր պաշտօնին կարգապահութեան դէմ:
3. Իր արարքներուն նկատմամբ ի՞նչ որ ալ ըլլայ Պատ. Թագ. Խորհրդին պատասխանատուութեան չափը, այսինքն Խորհուրդը զինք թեւադրած ըլլա՛յ կամ ոչ ինքը Տ. Մկրտիչեան չղաղբիր հանրութեան առջև պատասխանատու մնալէ, գործած ըլլալով հանրային բարոյականի, նկարագրի և իր քարոզած սկզբունքներուն հակառակ:

Բ

Հիմա գանք Տ. Մկրտիչեանի նա-  
մակին երկրորդ եւ գլխաւոր մասին  
քննութեանը: Հոս ալ Տ. Մկրտիչեան  
փաստերու եւ իրողութիւններու տեղ  
որոնք իրենց բացակայութեամբ կը

փայլին ամբողջ գրուածքին մէջ, կը դիմէ ուրիշ միջոցի մը — պատրանքի, աչքխաբուկի, ածպարարութեան, — մտնալով որ «ժողովուրդը այդ կարգի իմաստակ վարպետութիւններու արժէքը աղէկ ըմբռնած է»: Սուտը եւ խեղաթիւրումը միայն իրեն յենարան ունեցող դատմը, որ կորսուելու դատապարտուած է իրողութիւններու ջախջախիչ հարուածին տակ, ձեռք կառնէ առերևոյթ ամենամեծ վստահութեամբ, վստահութիւն մը բոլորովին կեղծ՝ արուեստակեալ՝ խարուսիկ և որուն իրականը Սահմանադրութեան պաշտպան մը միայն կրնայ ունենալ՝ ճշմարտութեան, իրաւունքի և օրէնքի վրայ կռթնած: Բայց ի՞նչ փոյթ Տ. Մկրտիչեանի համար. բաւական է որ շատ ցուցիչ բառերով ու պատգամներով մէկէն ի մէկ տպաւորէ փաստերու անուշագիր ընթերցողները. անոնք՝ — և այդպիսիներ կան դժբաղդաբար — առանց խնդրին խորը մտնելու՝ այդ ածպարարական տպաւորութեան տակ՝ պիտի ըսեն իւրովի. «Հարկաւ իրաւունք ունենալու է այս մարդը որ այսչափ վստահօրէն ու տիրաբար կը խօսի»: Տղէտներու և տխմարներու այդ դատաստանը անդամ բաւական է իրեն իբր յաղթական՝ կոկոզայիչ պարծենալու համար: Մէջ բերե՞ք այս օգիտով եւ ուղղութեամբ յօդուածին մէջ տեղ տեղ ցանցնած խօսքերը. «Բանք հիմա մեր հակառակորդին ամենէն զօրաւոր զէնքին ոչով, իրեն համար, այլ եւս կարելի չէ վիճել թաղ. Խորհրդոյ հակասահմանադրական կազմութեան մասին»: «Բալով Թ. Գ. Խորհրդի առժամեայ հանգամանակի, զոր այնքան մատերնիդ փաթթած էք և զոր վերոյիշեալ նամակին մէջ ինծի դէմ իբրեւ փաստ կը բերէք, ձեր անեկեկ խախտո՞ց զեկեկ է այդ»: «Ինտէք ինչո՞ւ համար»: «Ձեմ գիտեր որ պիտի կրնա՞ք ըսածս ըմբռնել»: Մի՛ աշխա-

տիք պատասխանելու»: «Կը տեսնէք ա՜հա, պարոն Սահմանադրութեան պաշտպան, ոչ ձեր սօքումանը (խօսքը ՉԱԽՉԱԽԻՉ տօքիւմանին վրայ է) շատ չի նպաստեր ձեր դատին. քիչ մը անդին ձեզի բացատրեմ թէ բնաւ ո՛ր և է նշանակութիւն չունի»: «Հակառակը պնդելնիդ արժէք չունի»: «Կուտ մը չարժեր» ևն, ևն:

Իսկ այս խոշոր բառերուն ետեւէն փաստեր ու իրողութիւններ զուր տեղ կը փնտռէք. դոյութիւն չունին անոնք. մէկ քանի կցկտուր, թափթըփուկ առարկութիւններ, մէկ քանի բռնապոսիկ, ծիծաղելի պատճառաբանութիւններ, և ահա՛ վրայ կը հասնի ռեֆրա՛նը՝ մնացած պակասը լեցնելու համար: Ինչպէս կը տեսնէք, հոս ալ Տ. Մկրտիչեան իր դերին մէջն է, իր վարպետը Խորհրդին նախանձը շարժելու աստիճան:



Վերը տեսանք թէ՛ ըստ Տ. Մկրտիչեանի, մեր տօքիւմանը քնառ ու եւ նշանակութիւն չունի եղեր... իրականութիւնը սակայն այն է որ, եթէ փաստերու եւ իրողութիւններու անսպասելի շարք մը չունենայինք ի ձեռին որոնք ամենքն ալ զատ զատ կը հաստատեն թաղ. Խորհրդի հակասահմանադրական կազմութիւնը, այդ հռչակաւոր տօքիւմանը ինքնին բաւական էր ամենաշախախտ կերպով ապացուցանելու համար մեր ըսածները, միանգամայն մերկացնելով Տ. Մկրտիչեանի ստախօսութիւնը եւ խեղաթիւրումները: Այդ տօքիւմանը՝ Պատ. Թաղ. Խորհրդին հակասահմանադրական վկայագիրն է՝ նոյն Խորհրդին յայտնի ստորագրութեամբ. այդ տօքիւմանը՝ Տ. Մկրտիչեանի դատապարտութեան վճռագիրն է իր շարադրութեամբ ու ձեռագրով: Կարժէ ուրեմն

որ անգամն մ'ալ խոչոր երկաթագրով  
Տ. Մկրտիչեանի և իր «տեսութիւնները»  
պաշտպանելու չափ կուրացողներուն  
աչքը խօթենք զայն.

«ՏԵՂԻՈՅՍ ՀԱՅ ՀԱՅՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ  
ՄՇՏԱԿԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ  
ՓԱՇԱՅԻ ԿՈՂՄԷ ԿԱՐԳՈՒԱԾ ԹԱՂԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՍ ԱՄԵՆ ԼԻԱԶՕՐ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ  
ՎԱՅԵԼԷ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ  
ԻՆՔՁԻՆՔԸ ՅԱՐԳԵԼԻ ԸՆԾԱՅԵԼՈՒ ՀԱՄ  
ՄԱՐ ԵՒ ԻՐ ԱՌԺԱՄԵԱՅ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ  
Ո ԵՒ Է ԿԵՐՊՈՎ ԱՐԳԵԼՔ ՉԻ ՀԱՆԴԻ-  
ՍԱՆԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ ԶՕՐԱԽՈՐ  
ԶԵՌՔՈՎ ՄԸ ՎԱՐԵԼՈՒ.»

(Ստորագր.) Փոխ-Ասեկապէս Թա-  
լակաւ Խորհրդոյ. Կ. Բէճիճեան

Ինչպէս կը տեսնեն ուշիմ ընթեր-  
ցողները, այս տօքիւմանը իրողութիւնը  
ա՛յն աստիճան յատակ, մեկին ու պայ-  
ծառ կերպով կը ներկայացնէ որ բնա-  
ռ և է բացատրութիւն չի վերցնելու  
Ասոր տարբեր մեկնութիւն տալու ել-  
լալը՝ ուրիշ բան չի նշանակեր բայց  
եթէ յայտարարել թէ Պատ. Թաղական  
Խորհուրդը իր Վսեմ. Փոխ-Ատենա-  
պետ Պէյին ասորագրութեամբ ՍՈՒՏ  
ԽՕՍԱԾ է, կամ գէթ ըսել թէ՛ Պատ.  
Թաղ. Խորհուրդը ա՛յն աստիճան ծան-  
ծաղամիտ անձերէ կը բաղկանայ որոնք  
իրենց ժողովրդէն թէ Փաշայէն ընտ-  
րուած ըլլալը և իրենց պաշտօնին առ-  
ժամեա՞յ թէ ո՛չ-առժամեայ ըլլալը  
որոշելու ձեռնհասութիւնը չունին: Տ.  
Մկրտիչեան պարզապէս ըսել կուզէ.  
և Թաղ. Խորհուրդին պաշտօնական յայ-  
տարարութեան մի՛ հաւատար. այլ  
միայն իմ խօսքիս հաւատացէք:

Ահա Տ. Մկրտիչեանի խօսքերը  
բառ առ բառ.

«Պարզապէս վիճաբանելու համար  
պահ մը երթագրենք թէ Թաղ. Խոր-

հուրդը այսօր ձեր ըսածին համոզուի  
եւ ինքզինքը հակասահմանադրական  
նկատէ. անոր այդ ընթացումը օրէնքի  
առջև անբաւական է Խորհրդոյ հակա-  
սահմանադրական կողմութիւնը ապա-  
ցուցանելու: Ձեմ գիտեր որ պիտի  
կրնա՞ք ըսածս ըմբռնել: Օրէնքը...  
խօսքերու ականջ չի կախեր. օրէնքը  
փաստեր, իրողութիւններ կը պահանջէ»:  
(Պիտի կարենայինք ըմբռնել, եթէ  
ստուգիւ փաստեր, իրողութիւններ  
գոյութիւն ունենային. բայց ո՞ր են  
անոնք. լսեցէ՛ք միակ «փաստը» որ  
մէջ կը բերէ, բայց որը ՇԻՆԾՈՒ Է)  
«Արդ ես ձեզի կը հաստատեմ որ Թաղ.  
Խորհրդի վեց անգամոց չորսը ազգէն  
ընտրուած են Մահմանագրութեան  
տրամագրութեանց համաձայն: Ասոր  
գէմ ի՞նչ ըսելիք ունիք»: (Ահա մեր  
ըսելիքը. Այն Թաղ. Խորհուրդը որուն  
համար ազգէն ընտրուած էին անոնք՝  
ԼՈՒԾՈՒԱԾ Է. ԱՂ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ.  
այս բանը դուն ԳԻՏԵՍ ու անպատ-  
կառօրէն ԿՈՒՐԱՆԱՍ. իմացա՞ր մեր ը-  
սելիքը. փա՛ս կը փնտռես, լաւ, չա՛տ  
փաստ, չա՛տ իրողութիւններ մէջ բե-  
րենք. բայց առ այժմ ահա փաստը.  
Խորհրդի պաշտօնական յայտարարու-  
թիւնը. որո՞ն հաւատանք, ան՞որ թէ  
քեզի: Տ. Մկրտիչեան կաւելցնէ. «Ե-  
թէ այսօր այդ չորս անգամները ի-  
րենք ելլեն յայտարարեն թէ ազգէն  
չեն ընտրուած՝ (չէ թէ չորսը այլ վեցն  
ալ ազգէն չեն ընտրուած և այդ ի-  
րենք յայտարարած են. կարգա՛.  
«ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ԿՈՂՄԷ ԿԱՐ-  
ԳՈՒԱԾ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴՍ») ԱՅԳՊԵՄԻ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԷԿ ԿՈՒՏ  
ԶՄԻՐԺԵՐ (!!!) զի այդ յայտարարու-  
թիւնը, եթէ երբէք չեն, ճՇՄԱՐՏՈՒ-  
ԹԵԱՆ ՀԱԿԱՌԱԿ ՊԵՏԷ ԸԼԼԱՐ (!!!)» Եւ  
որովհետեւ Պատ Թաղ. Խորհուրդը այդ  
յայտարարութիւնը արդէն անենաբա-  
ցորոշ կերպով ըրած է ինդրոյ նիւթ  
պաշտօնագրով, ուրեմն, Տ. Մկրտիչ-

եան ըսել կուզէ թէ ՊՍՏ. ԹԱՂ. ԽՈՐ-  
 ՀՈՒԴԻՆ ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ. Ապրի՛ս. Տ.  
 Մկրտիչեան, սքանչելի կերպով կը  
 պաշտպանես Թաղ. Խորհուրդը. քեզ  
 պէս փառաբան մարդ վնասելով չի  
 դանար: Բայց ես համարձակ եւ ճակա-  
 տաբայ կը յայտարարեմ հրապարակաւ.  
 Պատ. Թաղ. Խորհուրդը չէ՛ որ ՍՈՒՏ ԿԸ  
 ԽՕՍԻ, այլ Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ. Թաղ. Խոր-  
 հրդի վերջիչեալ յայտարարութիւնը,  
 սօփիւնանք, բացարձակ ճշմարտութիւնը  
 կը ներկայացնէ. Թաղ. Խորհուրդը թէ  
 իսկ ուզէ իշ ընտրութեան կերպչ եւ իր  
 առժամեայ հանգամանքը ուրանալ,  
 հրապարակի վրայ այդ սօփիւնանքի ե-  
 րևումէն վերջ՝ անկարգ է այդ բանը  
 ընելու. Թաղ. Խորհրդի վեց անդամ-  
 ներէն եւ ո՛չ իսկ մէկը պիտի յանձն  
 առնու երբէք այդ պիտի սուտ յայտա-  
 րարութիւն մ'ընելու. այս մասին ա-  
 պահով եմ, վասն զի ա՛նկե մարդ Լեւոն  
 Մկրտիչեան չի՛:

Արգար ըլլալու համար, Տիա-  
 Մկրտիչեանի մէկ «գորաւոր» փաստն  
 ալ մէջտեղ բերեմ. եթէ Թաղ. Խոր-  
 հուրդը յայտարարէ (ու տեսանք որ  
 յայտարարած է) թէ ինք ազգէն չէ՛  
 ընտրուած այլ Փաշայէն, զիտէ՞ք ինչ  
 պիտի ըլլայ. Լսեցէ՛ք. «Անգին ընտ-  
 րութեան պատկառելի քուէտուփի  
 Առաջնորդարանին մէջ պահուած կը  
 մնայ. անիկա (պիտի ելլայ իր թաքըս-  
 տոցէն, յօնքերը պիտի պռստէ, ձեռ-  
 քերը պիտի շարժէ ու) բաճրաձայն պի-  
 տի բողոքէ ատանկ յայտարարութեան  
 մը դէմ»: Մի՛ խնդաք, ընթերցողնե՛ր,  
 այլ խոստովանեցէ՛ք որ Թաղ. Խորհրդի  
 հնարագէտ փաստաբանը հրաշալի գիւտ  
 մը ըրած է՝ որ ամէն անգամ ընտրու-  
 թիւններ ընելու տաղտկալի հոգէն,  
 ընտրական պայքարէն ու իրարանցումէն  
 — էր խօսքով՝ «ընտրական փաստա-  
 նոյններէ» — կ'ազատէ ազդը: Այդ  
 գիւտը հետեւեալն է. անգամ մը միայն  
 ժողովրդային քուէարկութիւն կատա-

րէ՛. ա՛ն քուէները ու խնամով զե-  
 տեղէ՛ քուէտուփի մը մէջ, որը կապտէ  
 ոսկիէ շինել. անկէ վերջ ամէն անգամ  
 երբ մարմինը լուծուի եւ նոր մարմին  
 մը կազմելու հարկը ներկայանայ, քուէ-  
 տուփին դէմէ՛, ու անոր մէջ այդ ա-  
 ուալին եւ վերջին անգամուն բացար-  
 ձակ քուէ շահողներէն ո՛ր է մէկուն  
 կամ մէկ քանիին իրաւունք տուր որ ի-  
 րենց ուղած կերպով վերակազմեն  
 մարմինը, որը այս կերպով նախորդին  
 շարունակութիւնը ըլլալու առաւելու-  
 թիւնն ալ կունենայ եւ առժամեայ  
 հանգամանք չունենալէն զատ, անձե-  
 րանալի կը դառնայ: Եթէ օրինական  
 տեսակէտներով վարանիք այս ձեւը  
 ընդունիլ, Տ. Մկրտիչեան պիտի փու-  
 թայ նաև յայտարարէ թէ այս սքան-  
 չելի նոր գիւտը, այսինքն Մշական  
 Ասեմապետի հետ Մշական Թաշական  
 Խորհուրդ մը ունենալը, «ոչինչ ունի իր  
 մէջ ազգակործան եւ Սահմանադրու-  
 թեան ո՛չ տառին հակառակ է եւ ո՛չ  
 ալ ոգիին»:

ՄԻՉԲԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

(Յարուակելի)

ՄԱՀԱԳՈՅԺ

Հայ Թատրոնի նահապետք Տիար  
 Թովմաս Պ. Յասուլեանեան, որ ֆա-  
 նասուն սարիներու գործունէութեամբ  
 փայլած էր քաւերաբեմին վրայ, ամ-  
 սոյս 15ին, կիրակի առաւօտ ժամը 9  
 30ին կնկեց իր սառապակիր կեանքը  
 ֆաղափս Գերմանական Հիւանդանոցին  
 մէջ, ուր ողբացեալ Գերասիմապետը  
 փոխադրուած էր Օգոստոսի սկիզբն ի  
 վեր:

Յաղարկատրութեան ժամու հան-  
 դէսը կասարուեցաւ ամսոյս 16ին եւ-  
 կուարքի երեկոյեան ժամը 4.30ին Ս.  
 Պողոս Պետրոս եկեղեցիին մէջ, ուսկից  
 հանգուցելոյն նախարկ փոխադրուեցաւ  
 Գերեզմանասունը: